ԿԱՐԾԻՔ

Հրանուշ Ալբերտի Սահակյանի «Գերմանա-հայկական ընկերության հիմնադրումը և գործունեությունը 1914-2014 թթ.» թեկնածուական ատենախոսության մասին

Հայ ժողովրդի համար բախտորոշ, ճակատագրական պահերին տարբեր երկրներում ի հայտ են եկել հայասիրական շարժումներ, ստեղծվել են կազմակերպություններ, որոնք փորձել են միջազգային հանրությանն իրազեկել հայությանը պատուհասած սպառնալիքների ու մարտահրավերների մասին: Թուրքական տարբեր վարչակարգերի կողմից XIX դարի վերջին սկզբնավորված և XX դարի սկզբներին շարունակվող հայերի ցեղասպանության քաղաքականության պայմաններում մարդասեր գործիչների շնորհիվ մի շարք երկրներում՝ Ռուսաստանում, Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, սկանդինավյան երկրներում և ԱՄՆ-ում առաջ եկան հայասիրական շարժումներ, հիմնադրվեցին տարաբնույթ կազմակերպություններ, որոնցից մեկն էլ Յոհաննես Լեփսիուսի ջանքերով 1914 թ. հիմնադրված Գերմանա-հայկական ընկերությունն էր:

Հայասիրական այդ շարժումներն ու կառույցները, ըստ էության, յուրատեսակ կամուրջներ էին հայ ժողովրդի և միջազգային հանրության միջև, որոնք իրենց հնարավորությունների սահմաններում փորձում էին սատարել ծանր կացության մեջ հայտնված մեր ժողովրդին: Անշուշտ, միամտություն կլիներ կարծել, թե այդ շարժումներն ու կառույցներն առաջացել ու գործում էին բացառապես մարդասիրական մղումներից ելնելով: Բնական պետք է համարել, որ դրանք գտնվում էին այն պետությունների իշխանությունների հսկողության ու ազդեցության ներքո, որտեղ որ ստեղծվել ու գործում էին: Ասվածը վերաբերվում է ոչ միայն XIX դարավերջին և XX դարասկզբի հայասիրական շարժումներին ու կազմակերպություններին, այլև վերջին տարիներին արցախահայության գլխին կախված ցեղասպանության վտանգի պայմաններում տարբեր երկրներում ակտիվություն դրսևորող կառույցներին: Խնդիրն

այն է, թե նմանատիպ կառույցներում ընդգրկված հայազգի գործիչները ինչպես նախկինում, այնպես էլ ներկայումս որքանով են կարողացել կամ կարողանում դրանց գործունեությունն իրապես դարձնել հայանպաս և նպատակաուղղել հայ ժողովրդի իրավունքների պաշտպանությանն ու շահերի սպասարկմանը: Վերը նշվածից ելնելով, կարելի է արձանագրել, որ Հ. Սահակյանի թեկնածուական ատենախոսության թեման բավական արդիական է:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորվում է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացվում են նպատակները և խնդիրները, գիտական նորույթը, կիրառված գիտական մեթոդաբանությունը, ուսումնասիրության ժամանակագրական շրջանակները, աղբյուրագիտական հենքը և հիմնախնդրի ուսումնասիրվածության աստիճանը:

Առաջին գլխում ատենախոսն անդրադարձ է կատարել Գերմանա-հայկական ընկերության հիմնադրման շարժառիթներին և Առաջին աշխարհամարտի տարիներին ծավալած գործունեությանը՝ ներկայացնելով Օսմանյան կայսրությունում ցեղասպանության ենթարկվող հայերի իրավունքների և անվտանգության պաշտպանությանն ուղղված կառույցի նախաձեռնությունները և դրանց արդյունքները: Տվյալ գլխում քննարկվում է նաև պատերազմի տարիներին Հայկական հարցում Օսմանյան կայսրության դաշնակից Գերմանիայի վարած քաղաքականությունը, ինչը որոշակիորեն իր բացասական կնիքն էր թողնում նաև Գերմանա-հայկական ընկերության գործունեության վրա:

Երկրորդ գլխում ատենախոսի կողմից քննարկվել են Առաջին աշխարհամարտի ավարից մինչև 1956 թ. կազմակերպության լուծարումն ընկած ժամանակաշրջանում Գերմանա-հայկական ընկերության կատարած աշխատանքները՝ անդրադարձ կատարելով նաև հիտլերյան վարչակարգի ժամանակաշրջանում հայ ժողովրդին ուղղված մարտահրավերների հաղթահարման ուղղությամբ կազմակերպության ծավալած

գործունեությանն ու դրա արդյունքներին:

Երրորդ գլուխը նվիրված է 1973 թ. Գերմանա-հայկական ընկերության վերստեղծումից մինչև 2014 թ. ընկած ժամանակաշրջանում կառույցի գործունեության լուսաբանմանը՝ անդրադարձ կատարելով 1988 թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժի հետևանքների վերացմանը, Արցախյան խնդրի հայանպաստ լուծմանը նպաստելուն ուղղված կառույցի նախաձեռնություններին, ինչպես նաև Գերմանիայի Բունդեսթագում Հայոց ցեղասպանությանը վերաբերյալ բանաձևի ընդունման նպատակով վերջինիս կողմից կատարված աշխատանքներին:

Եզրակացություններում ամփոփվել են աշխատանքի հիմնական արդյունքները:

Օգտագործելով թեմային վերաբերող տարաբնույթ աղբյուրներն ու տարբեր հետազոտողների ուսումնասիրությունները, Հ. Սահակյանին ընդհանուր առմամբ հաջողվել է ստեղծել համապարփակ աշխատություն և հաղթահարել իր առջև դրված խնդիրները: Ատենախոսության արժանիքներից մեկն էլ կարելի է համարել այն, որ թեմայի շրջանակներում հեղինակի կողմից շրջանառության մեջ են դրվել Բեռլինի Ավետարանական եկեղեցիների կենտրոնական արխիվի, Պոտսդամի «Լեփսիուսի տան» համապատասխան փաստաթղթերն ու տեղեկագրերը, ինչպես նաև ընկերության վերստեղծման գործընթացի մասնակից Շ. Հովասափյանի և կառույցի ներկայիս ղեկավար Ռ. Քանդյանի կողմից տրամադրված տեղեկագրերը:

Այդուհանդերձ, աշխատանքը զերծ չէ նաև բացթողումներից ու թերություններից, որոնց վրա հրավիրում ենք ատենախոսի ուշադրությունը.

1. Ատենախոսության վերնագրից տպավորություն է ստեղծվում, թե կազմակերպությունը մեկդարյա անընդհատ գործունեություն է ծավալել, մինչդեռ, ատենախոսության ներածության մեջ անդրադառնալով հետազոտության ժամանակագրական շրջանակներին, հեղինակը փաստում է, որ ֆինանսական խնդիրների և Գերմանիայում հիտլերյան վարչակարգի հաստատման պատճառով 1923-1925 և 1930-1933 թթ. ընկերության գործունեության մեջ ընդհատումներ են եղել, իսկ 1956 թ. գործունեությունն առհասարակ կասեցվել է և վերականգնվել միայն 1972 թ.: Այսինքն՝ ատենախոսության

վերնագրում նշված 100 տարիներից շուրջ երկու տասնամյակ ընկերությունը տարբեր պատճառներով գործունեություն չի ծավալել: Կարծում ենք, որ ատենախոսության վերնագրում տարեթվերի փոխարեն ավելի ճիշտ կլիներ գործածել «հիմնադրումից մինչև մեր օրերը» ձևակերպումը, ինչը թույլ կտար ամբողջացնել ընկերության գործունեությունը, ինչպես նաև խուսափել նման հակասություններից:

2. Ատենախոսության վերնագրում նշված տարեթվերի տրամաբանությամբ առաջնորդվելով, ատենախոսը աշխատանքի կառուցվածքի հիմքում դրել է ժամանակագրությունը: Հաշվի առնելով աշխատանքի վերնագրում նշված տարեթվերի և ընկերության գործունեության տարիների անհամապատասխանության հետ կապված դիտարկումը, կարծում ենք, որ աշխատանքի գլուխների վերնագրերում շեշտը պետք է դրվեր ոչ թե տարեթվերի, այլ հիմնախնդիրների վրա, ինչպես որ դա արված է ենթագլուխների վերնագրերում:

3. Որոշ ենթագլուխների վերնագրերն անհարկի ծանրաբեռնված են, հեղինակը փորձել է դրանցում զետեղել քննարկվող բոլոր հարցերը, մինչդեռ կարելի էր սահմանափակվել հակիրճ և ընդհանրական ձևակերպումներով: Այսպես՝ 1.2. ենթագլխի վերնագրում հատուկ շեշտված է ընկերության կողմից կամավորական շարժումը կասեցնելու փորձերի հանգամանքը, ինչը, կարծում ենք, ավելորդ է, քանզի այդ հարցին ընդամենը հպանցիկ անդրադարձ է կատարվել՝ մեկ էջի սահմաններում (էջ 34-35) ներկայացնելով Ռ. Դարբինյանի զրույցը Արմեն Գարոյի հետ: Որևէ հետևանքի չհանգեցրած այդ դրվագը, կարծում ենք, հեղինակին բավարար հիմք չի տվել ենթագլխի վերնագրում այն զետեղելու համար:

4. Էջ 44-ում ատենախոսը հիշատակում է Կ. Պոլսում գործող Շ. Միսակյանի գաղտնի խմբակի մասին, սակայն ցանկալի կլիներ, որ հեղինակն օգտվեր «Մեծ եղեռնի առաջին վաւերագրողը՝ Շաւարշ Միսաքեան», խմբ. Եր. Փամպուկեան, Անթիլիաս, 2017, արժեքավոր աշխատությունից, որում առաջին անգամ շրջանառվող փաստաթղթերի և այլ աղբյուրների հիման վրա հանգամանորեն ներկայացված է հայերի զանգվածային բնաջնջման պայմաններում ոչ միայն մայրաքաղաք Կ.Պոլսում, այլև Արևմտյան

Հայաստանում ու կայսրության հայաբնակ այլ շրջաններում խմբակի ծավալած գործունեությունը:

5. Կարծում ենք, ատենախոսը պետք էր վերապահ մոտեցում դրսևորեր Յ. Լեփսիուսի և գերմանացի մյուս հայասերների շարքին Պաուլ Ռոհրբախին դասելու հարցում (էջ 17-19): Ինչպես հայտնի է, ի տարբերություն Գերմանա-հայկական ընկերության մյուս անդամների, Ռոհրբախն Առաջին աշխարհամարտի տարիներին աշխատել է Գերմանիայի ԱԳՆ-ում, հետևաբար Հայկական հարցում Օսմանյան կայսրության դաշնակից այդ պետության պաշտոնական այն դիրքորոշման կրողն ու արտահայտողն էր, որն ակնհայտորեն հակադրվում էր հայ ժողովրդի կենսական շահերին: Հայ ժողովրդի հասցեին հնչեցված դրվատանքի խոսքերից անկախ Ռոհրբախը մշտապես հակված է եղել հայերին Գերմանիայի շահերին ծառայեցնելու գաղափարին: Չմոռանանք, որ նա հայերին Արևմտյան Հայաստանից տեղահանելու և Բեռլին-Բաղդադ երկաթգծի շրջանում վերաբնակեցնելու կողմնակիցն ու ջատագովն էր: Ասվածին ավելացնենք, որ Գերմանա-հայկական ընկերության անդամ լինելուն զուգահեռ Ռոհրբախն անդամակցել է նաև Գերմանա-թուրքական միությանը (էջ 26), ինչը հիմք է տալիս կարծելու, որ երկու կառույցներին նրա միաժամանակյա անդամակցությունը կատարվել էր Գերմանիայի արտաքին քաղաքական գերատեսչության հանձնարարությամբ՝ դրանց գործունեությունը վերահսկողության տակ պահելու նպատակով: Թեև հայերի զանգվածային կոտորածների և տեղահանությունների պատճառաբանությամբ 1916 թ. օգոստոսի 16-ին Ռոհրբախը Գերմանա-թուրքական միության անդամությունից հրաժարվեց, սակայն շարունակում էր աշխատել Գերմանիայի ԱԳՆ-ում: Պատահական չպետք է համարել, որ հենց Ռոհրբախը միջնորդ հանդիսացավ Գերմանիայի ԱԳՆ-ի և Գերմանա-հայկական ընկերության միջև յուրատեսակ գործարքի կնքման հարցում, որի համաձայն ընկերությունը պետք է դադարեցներ Օսմանյան կայսրությունում հայերի ծանր վիճակի մասին նյութերի տարածումը, ինչի դիմաց Գերմանիայի կառավարությունը հայ տարագիրներին պետք է շոշափելի նյութական օժանդակություն ցուցաբերեր և կանխեր գերմանական մամուլում

հակահայկական նյութերի տարածումը (էջ 56)։ Հատկանշական է, որ ընկերության բոլոր անդամներին այս գաղափարին հանգեցնելուց հետո Ռոհրբախն անգամ գերմանական իշխանությունների կողմից Նիդեռլանդներ արտաքսված Լեփսիուսին էր փորձում համոզել լռություն պահպանել և չբարձրաձայնել ցեղասպանության ենթարկվող հայերի ծանր վիճակի մասին, սակայն վերջինս մնաց անդրդվելի։ Հետագա զարգացումներն ապացուցեցին, որ Օսմանյան կայսրության դաշնակից Գերմանիայի իշխանությունների տված հավաստիացումներին չվստահող Լեփսիուսը միանգամայն իրավացի էր, քանզի գործարքը խախտվեց հենց գերմանական կառավարության կողմից։

Անգամ Լեփսիուսից և մյուս հեղինակավոր գործիչներից հետո Ռոհրբախի Գերմանա-հայկական ընկերության նախագահ ընտրվելը հիմք չի տալիս նրան դասել այդ գործիչների շարքում, քանզի ընկերության գործունեությունը կասեցվեց հենց նրա նախագահության օրոք։

Վերը նշված փաստերն ու հիմնավորումները հստակ շարադրված են ատենախոսության էջերում և պարզապես տարակուսելի է, որ այսքանով հանդերձ ատենախոսը փորձում է Գերմանա-հայկական ընկերության ականավոր գործիչների և Ռոհրբախի միջև հավասարության նշան դնել, ինչը կարծում ենք, առնվազն անարդարացի է և պետք է վերանայվի ատենախոսի կողմից։

6. Ընկերության գործունեության հետ կապված առանցքային որոշ հարցեր բաց են մնացել։ Այսպես՝ հեղինակը վերջնական պատասխան չի տալիս, թե, ի վերջո, ինչո՞վ էր պայմանավորված ընկերության գործունեության կասեցումը։ Գործունեության կասեցման հետ կապված ներկայացվում են երեք տարեթվեր՝ 1944 թ.՝ «Armenien» պարբերականի հրատարակման դադարեցում, 1953 թ.՝ Ռոհրբախն իր հուշերում ոչինչ չի նշում ընկերության գործունեության մասին և 1956 թ.՝ ընկերության անվանումը բացակայում է հասարակական կազմակերպությունների ցանկում, հավանաբար, որոշ ժամանակ գործունեություն չծավալելու պատճառով։ Տարբերակները ներկայացնելուց հետո դրանցից որևէ մեկին իր հակվածությունը հիմնավորելու փորձ ատենախոսը չի կատարում։

7. Նույն կերպ պատշաճ բացատրություն չի տրվում 1944 թ. հետո «Armenien» պարբերականի հրատարակման դադարեցման կապակցությամբ: Այս առումով, թերևս, կարելի էր առաջ քաշել, օրինակ, Երկրորդ աշխարհամարտից հետո Գերմանիայի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների վարկածը, քանզի «Armenien» պարբերականի էջերում հայերի արիական ծագման վերաբերյալ նյութեր էին տպագրվել, ինչը նացիստների հետ էր ասոցացվում:

8. Աշխատանքը կշահեր, եթե Գերմանա-հայկական ընկերության նախագահների, նրանց ղեկավարման տարիների և այդ ընթացքում ունեցած ձեռքբերումների մասին տեղեկություններն աղյուսակի տեսքով զետեղվեին աշտենախոսության հավելվածում:

Արված դիտողություններն ընդհանուր առմամբ չեն նսեմացնում ատենախոսի կատարած աշխատանքը: Հրանուշ Սահակյանի «Գերմանա-հայկական ընկերության հիմնադրումը և գործունեությունը 1914-2014 թթ.» Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է թվանիշին ու մասնագիտությանը, հեղինակի հրատարակած հոդվածներն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները: Աշխատանքը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս, պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ց. Մարուքյան

Պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ց. Մարուքյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ ՊԻ գիտքարտուղար, պ.գ.թ., դոցենտ Հ. Ղ. Մուրադյան

31.08.2023 թ.